ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք . Մասիս
Կենտրոնական հր թիվ 4
Քաղաքապետարանի վարչ. շենք
☎ /0236/ 4-30-40, էլ.փոստ masis.ararat@mta.gov.am

«25» 01 2019թ. N 20

«Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն»ԲԲԸ -ի
տնօրեն Ֆ. Պողոսյանին
(հասցե ք. Մասիս, Երևանյան փող., թիվ 69)

Հարգելի պարոն Պողոսյան,

Մասիսի քաղաքապետարանի և «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն»ԲԲԸ-ի /հետայսու ընկերություն/ միջև 2019 թվականի հունվարի 17-ին կնքված թիվ ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-19/2 պայմանագրի /հետայսու Պայմանագիր/ շրջանակներում ընկերությունը ստանձնել է Մասիս քաղաքի աղբահանության ծառայությունների մատուցման պարտավորությունը /հետայսու ծառայություն/՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի պահանջների:

Ընկերության կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի հավելված 1-ով սահմանված պահանջներին՝ հետևյալ հիմնավորմամբ.

Պայմանագրի թիվ 1 հավելվածի «Ձեռքբերվող Ծառայության նկարագիր» բաժնում սահմանված է.

«0,6-1 մ^3 տարողությամբ նորմատիվներին համապատասխանող 246 հատ սեփական աղբարկղերի առկայություն»:

Նշված տեխնիկական պահանջը սահմանվել է՝ հաշվի առնելով քաղաքի առանձնահատկությունները, աղբահանության ծառայության որակը և բնակիչների պահանջը:

Մասիսի քաղաքապետի 2019 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել եք նաև Դուք, իրականացրել է ուսումնասիրություն և արձանագրել /21.01.2019 արձանագրություն/, որ Ընկերությունը Մասիս քաղաքում տեղադրել է 156 հատ աղբարկղ 246 աղբարկղի փոխարեն, որտեղ ստորագրել եք նաև Դուք: Քաղաքապետի 22.01.2019 թվականի թիվ 15 գրությամբ /որը հանձնվել է ձեզ առձեռն/ տեղեկացվել եք, որ Ձեր կողմից ծառայությունը իրականացվում է ոչ պատշաճ և առաջարկվել է մեկօրյա ժամկետում վերացնել թերությունները, այլապես միակողմանի կլուծվի պայմանագիրը: 24.01.2019 թվականին հանձնաժողովը կրկին կատարել է ուսումնասիրություն և արձանագրել, որ 24.01.2019 թվականի դրությամբ Մասիս քաղաքում Ընկերության կողմից տեղադրված աղբարկղերի թիվը կազմում է 178 հատ սեփական աղբարկղ 246-ի փոխարեն: Հանձնաժողովի կազմած արձանագրության տակ առկա է նաև Ձեր ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից պարզ է դառնում, որ Ընկերության կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 և 2.4.1 կետերով Մասիսի քաղաքապետարանը սույն թվականի հունվարի 25-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է 17.01.2019 թվականին կնքված ԱՄՄՔ-ԳՀԾՁԲ-19/2 պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ համաձայն 17.01.2019 թվականին կնքված տուժանքի մասին համաձայնագրի Ընկերության սպասարկող բանկին է ներկայացվելու պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր և տուժանքի մասին համաձայնագիրը:

Հարգանքով՝ Դավիթ Համբարձումյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

Կ. Օհանյան

Անդամներ՝

Ս. Ամիրջանյան

Ա. Վարդումյան